ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/30 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք. Երևան

«28» օգոստոսի 2024թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«12» օգոստոսի 2024թ. թիվ 1454-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ բնակավայրի կրթահամալիրի կառուցում», «ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի Ս.Խանզադյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցի կառուցում», «ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ **ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/30** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի **բացման և գնահատման նիստին** (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Աշոտ Խաչատրյան՝ Հանձնաժողովի նախագահ
Սամվել Պողոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Գայանե Քարիմյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Անահիտ Թադևոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Էվելինա Գրիգորյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

1. ***Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին***

Հայտերը բացվել են 2024 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 12:00-ին Armeps համակարգով, հասցեն՝ ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 հասցե, 4-րդ հարկ:

2. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները***

Armeps համակարգով էլեկտրոնային տարբերակով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցե, էլ փոստ
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8 info@haldi.am

3. ***Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից հայտը (ծրարը) կազմվել և ներկայացվել է էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով, և հրավերով սահմանված կարգով:

4. ***Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

Հանձնաժողովը փաստում է, որ հայտը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել է էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա է հետագա գնահատման:

5. ***Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված***

Չափաբաժին 1՝ «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ բնակավայրի կրթահամալիրի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գինը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	62,938,500	52 250 000 (Հիսուներկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար)	10 450 000 (Տաս միլիոն չորս հարյուր հիսուն հազար)	62 700 000 (Վաթսուներկու միլիոն յոթ հարյուր հազար)	Առկա է

Չափաբաժին 2՝ «ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի Ս.Խանզադյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գինը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	-	45,989,120	Հայտ չի ներկայացվել			

Չափաբաժին 3՝ «ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գինը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	-	44,682,200	Հայտ չի ներկայացվել			

6. *Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝*

6.1 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված հայտի ապահովումը Մասնակցի կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովումների իսկությունը:

7. Հանձնաժողովը որոշեց.

7.1 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.1-ին կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակցի՝ հայտի ապահովման իսկությունը:

7.2 Ընթացակարգը Չափաբաժին 2-ի և 3-ի մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, այն է՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

8. *Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը*

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7.1-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին 602 սենյակում:

Հանձնաժողովը
նախագահ՝

Աշոտ Խաչատրյան _____

անդամներ՝

Սամվել Պողոսյան _____

Գայանե Քարիմյան _____

Անահիտ Թադևոսյան _____

Էվելինա Գրիգորյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Անի Բազեյան _____